ՌԱՀՀԿ 2019

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՐՎԱԳԻՐ

ACNIS 2019
STRATEGIC SUMMARY

25

АЦСНИ 2019
СТРАТЕГИЧЕСКИЙ ОБЗОР

Հայաստան-2019.
Հետհեղափոխական զարգացումներ, սկզբունքներ, սպասումներ

Հայոց ցեղասպանության 100+ տարին — էջ 3
Remembering the Armenian Genocide

Րաֆֆու ողջույնի խոսքը — էջ 4
Raffi's Welcome
Приветственное слово Раффи

Քառորդդարյա անխոտոր ճանապարհ — էջ 6

Quarter Century Creative Path — էջ 13

Четвертьвековой неуклонный путь — էջ 14

Հարյուր տարվա աքսորը *(հատված)* — էջ 16
One Hundred Years of Exile *(excerpt)*

Հայաստան-2019. փաստեր, իրադարձություններ — էջ 19

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 25 տարեկան է

The Armenian Center for National and International Studies Turns 25

Армянскому центру стратегических и национальных исследований 25 лет



© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2019
© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2019
© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2019

Հայոց ցեղասպանության 100+ տարին.
Րաֆֆի Հովհաննիսյանի խոսքը

THE JERUSALEM POST

Remembering the Armenian Genocide by Raffi K. Hovannisian*

The Jerusalem Post has published an article by Raffi K. Hovannisian, the first Foreign Minister of the Republic of Armenia, ACNIS founder and leader of the Heritage Party.

11 April 2015

YEREVAN, Armenia – On April 24, 2015, a century closes circle upon the 1915 genocide and great national dispossession perpetrated by the Young Turk Party against the Armenian people.

This primer in premeditated nation-killing resulted not only in the deportation and murder of 1.5 million civilians on their native soil but also in the destruction of an entire civilization – nearly four millennia of continual presence in an ancestral cradle long mapped as Western Armenia.

The government of Turkey, which now occupies those lands, denies that a genocide ever took place there.

What shall I say on that April day, 100 years later, to my survivor grandfathers Kaspar and Hovakim, who had watched their parents and siblings killed by the sword or else taken away for conversion? Or to their wives, my grandmothers Siroon and Khengeni, the latter of whom was saved by a righteous Turkish neighbor?

We know that, in 1915, the survivors of Western Armenia were dispersed to the four corners of the earth and live to this day, some well and others poorly, in their adopted countries. My own family moved to the United States; I grew up in Los Angeles. We know too that a small Armenian republic, commonly known as Eastern Armenia, has recently come forth from under the rubble of the Soviet Union.

I repatriated to that Armenia, Eastern or Soviet Armenia, in 1989, during the final hours of the USSR. In 1991, I served as the new republic's first foreign minister. I raised Armenia's flag before the headquarters of the United Nations. This was not the Western homeland of my grandparents, but it was the reborn Armenia I was proud to call home.

Soon, however, our newfound freedom began to disintegrate.

Greed and corruption plagued the halls of government. I resigned. Years later I founded an opposition party, Heritage, and entered parliament. In 2013, I ran for president. Official results gave me 37 percent of the vote, although the hundreds of thousands who staged protests that spring were convinced this was not so. The incumbent administration stands.

Pending the accomplishment of a Republic of Armenia that is ruled by law, it is the progeny of Western Armenia who must come forward to press their collective rights, that flow from genocide and national dispossession.

This necessarily presumes a novel, contemporary mechanism of recourse with the denialist government of Turkey, and the braver segments of Turkish civil society.


A comprehensive agenda they must forge together, and in consultation with official Yerevan, but the bottom line must encompass the creation of an Armenian national hearth in historic Western Armenia.

This strategy should entail: 1) a guaranteed right of return for survivors of the genocide and their generations, whether or not their property deeds are currently intact; 2) designation for them of a special Hearth status that does not require a change of existing citizenship; 3) the rebuilding of Armenian schools and colleges, churches and monasteries, all with jurisdiction duly vested in the Armenian Hearth; 4) the construction of memorials and introduction of public curricula to educate the Turkish public about their true past; 5) celebration of the Armenian identity throughout the land, from Mount Ararat to Musa Dagh; and 6) negotiations between the republics of Turkey and Armenia triggering the first-ever sovereign reciprocal demarcation of the official frontier, including but not limited to provisions for an Armenian easement to the Black Sea.

As for me, having lived in Eastern Armenia for 25 years, the western heartlands of my grandparents have not stopped being mine. They are not, and shall never become, wastelands. They have been breached, perforce and by malicious policy, over the past century. But they and I continue to belong to each other. Nobody has more title than I do, the grandson of Kaspar and Hovakim, and the resilient multitudes whose forebears are as sacred as mine.

I plan shortly to return to find my Home, and trust that the Turkish authorities currently in power – pending their own facing of history and their own recognition of and redemption for the Armenian Genocide – will take every measure that my homecoming will be received with full honor, dignity, and an enduring respect for my rights as a child of the new-old Homeland.

**While this op-ed piece was published in the Jerusalem Post nearly five years ago, it remains relevant, even critical for the Armenian nation and the wider region to this very day. The Center reproduces Hovannisian's analysis to give depth and breadth to this modern policy challenge of Armenian national rights and identity. In the interim, he has become executive producer of his son Garin's films "1915 The Movie," dedicated to the centennial of the Genocide, and the new cutting-edge revolutionary documentary entitled "I Am Not Alone" which recently premiered at the Toronto International Film Festival depicting the eruption of the Armenian spirit of love and liberty.*



Raffi's Welcome

ACNIS, the nation's trusted Center, its original independent think tank on critical matters of public policy and international affairs, turns 25 this month. "May there be light in our eyes."

A quarter century in ceaseless civic service with impeccable standards of scholarship, the Armenian Center for National and International Studies has brought together the best of Hayastan, Artsakh, and the Diaspora.

Often short on resources and occasionally tested by the pettiness, partisanship and myopia of our environment—internal and external—we have continually risen above and always delivered a world-class benchmark of collective work product.

It has been our honor to serve sovereign Armenia and her people the world over in what has become the most challenging but also the finest hour in our modern history.

In diversity, we hold, there is strength. In unity—power.

Faith and Fatherland.

Raffi K. Hovannisian
Co-Founder, The Armenian Center for National and International Studies, First Minister of Foreign Affairs Republic of Armenia
Yerevan





Ռաֆֆու ողջույնի խոսքը

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը՝ Հայրենիքի այդ ազատ-անկախ, բնատիպ օրրանը, հանրային քաղաքականության եւ միջազգային հանգուցային հարցերի դիտարկման մտավոր դարբնոցը այս ամիս դառնում է 25 տարեկան: Մեր աչքը՝ լույս:

Քառորդ դար անընդմեջ գիտական բարձրագույն չափորոշիչներով քաղաքացիական ծառայության ընթացքում ՌԱՀՀԿ-ն ի մի է բերել Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի լավագույն ուժերը:

Հաճախ սուղ պաշարներով, երբեմն էլ մանրախնդրության, հատվածապաշտության ու կարճատեսության ներքին եւ արտաքին չափումները ճաշակած՝ մենք, այնուամենայնիվ, շարունակաբար վերընթաց ենք ապրել՝ հավաքական ջանքով, ստեղծարար ներշնչանքով եւ հետեւողական աքնանքով ապահովելով համաշխարհային վարկանիշ ունեցող աշխատանքային արդյունք:

Մեզ համար մեծագույն պատիվ է եղել ծառայել ինքնիշխան Հայաստանին, աշխարհասփյուռ իր ժողովրդին՝ նրանց կողքին կանգնելով մեր արդի պատմության ամենադժվար, բայց միաժամանակ ամենաստեղային այս ժամանակամիջոցում:

Ուժը, հավատացած ենք, բազմազանության մեջ է: Իսկ հզորությունը՝ աներկբա, մեր միասնության:

Հավատք եւ Հայրենիք:

Ռաֆֆի Կ. Հովհաննիսյան
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի համահիմնադիր, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար
Երեւան

Приветственное слово Раффи

Армянскому центру стратегических и национальных исследований - свободной, независимой и самобытной колыбели Родины, интеллектуальной кузницы по насущным вопросам общественной политики и международных отношениям, в этом месяце исполняется 25 лет.

За четверть века непрерывной гражданской службы с высочайшими научными стандартами, АЦСНИ объединил в себе силы лучших специалистов из Армении, Арцаха и Диаспоры.

Зачастую без достаточных ресурсов, а иногда и из-за мелочности, отсутствия беспристрастности и близорукости нашего окружения - внутреннего и внешнего - мы, тем не менее, последовательно восходили выше коллективным усилием, творческим вдохновением, последовательным кропотливым трудом, обеспечивая выполнение работ на самом высоком уровне.

Для нас являлось великой честью служить суверенной Армении, разбросанному по всему миру армянству, находясь рядом с ними в самом трудном, но и в самом звездном периоде нашей современной истории.

Сила, уверенны, в разнообразии. А мощь, безусловно, в нашем единстве.

Вера и Отечество.

Раффи К. Ованнисян
Сооснователь АЦСНИ, Первый министр иностранных дел Республики Армения
Ереван





Քառորդդարյա անխոտոր ճանապարհ



Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 25 տարեկան է

1994 թվականի հոկտեմբերի 5-ին էր, երբ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ նորաստեղծ ՌԱՀՀԿ-ի՝ Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի բացումը: Հայկական պետականության պատմության մեջ առաջին անգամ էր հիմնվում նմանատիպ հետազոտական կենտրոն, որն առաքելություն ուներ դառնալու ոչ միայն քաղաքագիտական մտքի շտեմարան, այլեւ երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական, գիտամշակութային բնագավառների կայացմանն ու առաջընթացին օժանդակող կառույց:



Կենտրոնի ստեղծման հղացումը ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար Րաֆֆի Հովհաննիսյանինն էր: Րաֆֆին ծնվել է ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգում, ականավոր պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի եւ բժշկագիտության դոկտոր Վարդիթեր Կոճոլոզյան-Հովհաննիսյանի ընտանիքում: Փայլուն կրթություն էր ստացել Ամերիկայի լավագույն բուհերում եւ պաշտոնեական առաջընթացի մեծ հեռանկար ուներ իր ծննդավայրում, որտեղ աշխատում էր բավական հեղինակավոր միջազգային իրավաբանական ընկերություններից մեկում: Սակայն Հայաստանում տեղի ունեցած անսպասելի արհավիրքը՝ Սպիտակի 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը, շրջեց բարեհաջող դասավորված նրա կյանքի ու աշխատանքային գործունեության հունը: Բնության տարերքին ավելացել էին Ադրբեջանից մազապուրծ հայ փախստականների չդադարող հոսքերը: Ծանր կացության մեջ հայտնված Հայրենիքը օգնության էր կանչում իր անվեհեր զավակներին:

Երեսուն տարին տակավին չբոլորած հայրենասեր երիտասարդը՝ թողնելով ամեն ինչ, բժշկուհի մայրիկի հետ շտապեց Գյումրի եւ Սպիտակ՝ սատարելու աղետյալ հայրենակիցներին: Եկավ, օգնեց եւ որոշեց մնալ մշտապես՝ հետագայում Երեւան տեղափոխելով նաեւ ընտանիքը. տիկնոջը՝ Արմենուհի Հովհաննիսյանին, եւ մանկահասակ երեխաներին: Նա պատրաստ էր լիդերի իր բնատուր տաղանդը, ամերիկյան մի քանի համբավավոր բուհերում ստացած խոր գիտելիքներն ու անհատնում եռանդը ծառայեցնել ավերակներից հառնող Մայր-հայրենիքի ծաղկման եւ տարաբախտ հայրենակիցների բարօրության գործին: Այդպիսի մարդիկ չէին կարող աննկատ մնալ, Րաֆֆին սիրվեց ժողովրդի կողմից, իսկ նորանկախ երկրի ղեկավարությունը 1991թ. հոկտեմբերին նրան վստահեց պետության արտաքին գործերի նախարարի բարձր ու պատասխանատու պաշտոնը: Փաստորեն զրոյից, այսինքն՝ ինքնուրույն դիվանագիտական աշխատանքի փորձի բացակայության պայմաններում, Հովհաննիսյանը շատ արագ կայացման ուղեգիծ դուրս բերեց հայրենի արտաքին քաղաքական գերատեսչությունը՝ որպես ժամանակի գործուն պետական կառույցներից մեկը: Իսկ նախարարի պաշտոնից հրաժարական տալուց հետո, որի պատճառը քաջ հայտնի է հանրությանը, նա երիտասարդ քաղաքագետ Տիգրան Հայրապետյանի հետ ձեռնարկեց ՌԱՀՀԿ-ի հիմնադրման գործը՝ համատեղ մշակելով ապագա Կենտրոնի գործունեության հայեցակարգը եւ հղացած գաղափարը կյանքի կոչելու ծրագիրը: Այնուհետեւ հարկ եղավ գրասենյակային տա-

րածք վարձակալել եւ այն հագեցնել անհրաժեշտ կազմ-տեխնիկայով, սարքավորումներով ու կահույքով:

ՌԱՀՀԿ-ի նախասկզբնական կադրային զինանոցը բավական համեստ էր. հիմնադիր նախագահից բացի, աշխատակցում էին եւս 7 հոգի՝ փոխտնօրեն եւ միաժամանակ գիտական հետազոտությունների ղեկավար Տիգրան Հայրապետյանը՝ այժմ լուսահոգի, իրանագետ Էմմա Քեզիջանյանը, թուրքագետ Հակոբ Չաքրյանը, լրագրող Աղասի Ենոքյանը, գործավար-քարտուղարուհի Սոնյա Բազիկյանը, վարչական մասի պատասխանատու Կարապետ Կալենցյանը, տեխնիկական աշխատող եւ համատեղությամբ վարորդ Սուրեն Ավագյանը: Ամիսներ անց անձնակազմը համալրվեց վերլուծական հակումներ ունեցող նոր մասնագետներով, որոնց մեծ մասը՝ լինելով պատմաբաններ եւ արեւելագետներ, հիանալի տիրապետում էին նորագույն պատմությանն ու տեղի ունեցող իրադարձությունների տրամաբանությանը, իսկ փորձագիտական իրենց հմտությունները զարգացրին արդեն գործնական աշխատանքի ընթացքում:



Համալրումը շահեկան եղավ ոչ միայն քանակապես, այլեւ որակական առումով, երբ 90-ականների կեսերից սկսած՝ ՌԱՀՀԿ եկան տարբեր տարածագոտիների ու թեմատիկ ընդգրկումների գծով փորձագետ-վերլուծաբաններ Գայանե Նովիկովան, Ներսես Մկրտչյանը, Մովսես Արիստակեսյանը, Մաթեւոս Տեր-Մանվելյանը, Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը, Աղավնի Կարախանյանը, Անահիտ Մկրտչյանը, Մանվել Սարգսյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Մկրտիչ Չարդարյանը, Աղասի Թադեւոսյանը, Բագրատ Սադոյանը, Վրեժ Ջիջիյանը, Արամ Հարությունյանը, Սերգեյ Շաքարյանցը, ինչպես նաեւ հետազոտական աշխատանքները համակարգող տնօրեն Արշավիր Գաբուճյանը, գրասենյակային մենեջեր Սամվել Մուրադյանը, համակարգչային դիզայներ Անդրանիկ Մուրադյանը, վարչական օգնական Շուշանիկ Խաթլամաջյանը, տեքստերի խմբագրության ու թարգմանության համար պատասխանատուներ Էլմիրա Սարվազյանը, Սյուզան Մարուխյանը, Չառա Օհանյանը, Թամար Ստեփանյանը եւ ուրիշներ:

Շատ չանցած, ի հայտ եկավ Կենտրոնի առաջին տպագիր արտադրանքը՝ մամուլում հրապարակված աշխատանքների անդրանիկ պրակը: Իսկ 1997թ. ապրիլին անգլերեն լեզվով լույս տեսավ «Mountainous Karabakh: A White Paper» գիրքը, որն աննախադեպ հաջողություն ունեցավ եւ մեծ պահանջարկ էր վայելում Հայաստանի ու աշխարհի զանազան միջազգային կազմակերպություններում եւ ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա ներկայացուցչություններում:

Գործունեության առաջին ամիսներից սկսած՝ ՌԱՀՀԿ-ն, բացի փորձագիտական առանձին հոդվածներից, մենագրություններից ու հատուկ ժողովածուներից, սեփական ուժերով թողարկում էր «Հայացք Երեւանից» լրատվական-վերլուծական եռամսյա պարբերականը, որի էջերում իրենց անաչառ արտացոլումն էին գտնում ինչպես Հայաստանի եւ Արցախի ներքին խնդիրներն ու մարտահրավերները, այնպես էլ տարածաշրջանի եւ միջազգային կյանքի զարգացումները:

1998թ. սկզբին պարբերականին փոխարինելու եկավ նույնանուն, բայց արդեն ամենամսյա քաղաքական, հասարակական, մշակութային վերլուծական պատկերազարդ հանդեսը, որի գլխավոր խմբագիրն էր Վալերի Այդինյանը՝ այժմ լուսահոգի: «Նորացված» ամսագրի շուրջ համախմբվել էր ոչ միայն աշխատակցային, այլեւ հեղինակային բավական հոծ ու արհեստավարժ կազմ՝ լրագրողներ Հրաչուհի Փալանդուզյանը (խմբագիր), Գեւորգ Լալայանը (թարգմանիչ եւ խմբագիր), Կարինե Յալանուզյանը (սրբագրիչ), թարգմանիչներ Նունե Այդինյանը, Մարինե Մարգարյանը, Լեոնիդ Չուլֆուղարյանը, հեղինակներից՝ ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանը, ԵՊՀ դասախոս Արամ Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածու Հայկ Դեմոյանը, լրագրողներից՝ Սերգեյ Գալոյանը, Լիլիթ Պողոսյանը, Ասպրամ Ծառուկյանը, Գեւորգ Հարությունյանը, Արմեն Հակոբյանը, Մուսաննա Պետրոսյանը եւ շատ ուրիշներ: Սակայն ամենաակտիվ հեղինակները, որոնք գրեթե յուրաքանչյուր համարում հանդես էին գալիս օրախնդիր թեմաներ արծարծող վերլուծական հոդվածներով, Կենտրոնի վերը թվարկված փորձագետներն էին: «Հայացք Երեւանից» հանդեսը հրատարակվեց մինչեւ 2003 թվականը:

2000 թվականը Ռազմավարականի կյանքում նշանավորվեց «Տարածաշրջանային եւ անդրտարածաշրջանային համագործակցության ու հակամարտությունների կարգավորման հեռանկարները» թեմայով երկօրյա միջազգային համաժողովով: Այն անցկացվեց սեպտեմբերի 27-28-ին՝ Լինսի հիմնադրամի, ԵԱՀԿ-ի, ՀՀ Կենտրոնական բանկի, «Տիգրան Մեծ» հրատարակչության եւ «KPMG Հայաստան» ընկերության օժանդակությամբ: Համաժողովին մասնակցող դեսպանների ու դեսպանությունների աշխատողների, միջազգային կառույցների բարձրաստիճան պաշտոնյաների,



պետական եւ ռազմական ականավոր գործիչների թվում էին ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ Արթուր Աղաբեկյանը, Հայաստանի ԱԳ փոխնախարար Ռուբեն Շուգարյանը, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի գրասենյակի այցելությունների վարչության պետ Ուերներ Բաուենսը, Օքսֆորդի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Մայքըլ Քեյզերը, ՌԴ ԱԳ նախարարության ԱՊՀ երկրների

4-րդ դեպարտամենտի փոխտնօրեն, դեսպան Ալեքսանդր Չեպուրինը, ԵԱՀԿ հակամարտությունների կանխարգելման կենտրոնի ղեկավար, դեսպան Մարթոն Քրազնայը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի տնօրեն, դեսպան Ռոյ Ռիվը, Թուրքիայի նախկին արտգործնախարար, դեսպան Իլթեր Թուրքմենը, ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Անատոլի Կլիմենկոն, իրանցի փորձագետ Մոհամադ Իբրահիմին, Եվրոպական քաղաքականության հետազոտությունների կենտրոնի համանախագահ Մայքըլ Էմերսոնը (Բելգիա), Վաշինգտոնի Ջոնս Հոպկինս համալսարանի Միջազգային հատուկ հետազոտությունների դպրոցի հրավիրյալ գիտաշխատող Լեյլա Ալիեւան (Ադրբեջան), Ուկրաինայի ԱԳ նախարարության ներկայացուցիչ Գենադի Ալտուխովը եւ ուրիշներ: Այդ ժամանակ ՌԱՀՀԿ-ի գործադիր տնօրենը ՀՀ նախկին պետնախարար Հրաչ Հակոբյանն էր:



Հաջորդ խոշոր միջոցառումն իրեն երկար չսպասեցրեց: 2001թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության աջակցությամբ կազմակերպված միջազգային համաժողովը նվիրված էր «Ոստիկանության դերը ժողովրդավարական համակարգում» թեմային եւ կոչված էր պատասխանելու այն գլխավոր հարցին, թե ՀՀ ինքնիշխանության առաջին տասնամյակում որքանով է հաջողվել հանրային կյանքում ներդնել օրենքի գերակայության սկզբունքներն ու հասարակության անդամների ապահովության երաշխիքները, եւ որոնք են արդյոք ոստիկանության դերի բարձրացման ու Հայաստանի ժողովրդավարացման խոչընդոտների հաղթահարման ուղիները: Ամենաշատը հենց այդ դրույթներն է իր բացման խոսքում կարեւորել ՌԱՀՀԿ հիմնադիր նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանը: Համաժողովում ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ-ում ԳԴՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆոլքեր Չայցը, իսկ թեմատիկ զեկույցներով՝ իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանը, սահմանադրագետ Վարդան Պողոսյանը, իրավաբան Հրայր Թովմասյանը, ՄԴ անդամ Վալերի Պողոսյանը, Մախարովի անվան Մարդու իրավունքների կենտրոնի տնօրեն Լեւոն Ներսիսյանը, ազգագրագետ Հրանուշ Խառատյանը, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանը, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանը, ՌԱՀՀԿ փորձագետ Աղասի Թադեւոսյանը եւ այլ բանախոսներ: Այդ ժամանակ «Հայացք Երեւանից» հանդեսի գլխավոր խմբագիրն Այդին Մորիկյանն էր, համակարգչային ձեւավորողը՝ Գոռ Գրիգորյանը, լուսանկարիչները՝ նախ Հակոբ Բերբերյանը, ապա՝ Վահան Քոչարը, տնօրենը՝ Ռաֆիկ Սկրտչյանը:

Իր գործունեության ութերորդ տարում՝ 2002-ին, Կենտրոնն արդեն հրապարակի վրա ուներ հետազոտական աշխատանքների, մենագրությունների, գրքերի ու երկրում, տարածաշրջանում եւ աշխարհում կատարվող առանցքային իրադարձությունների վերաբերյալ վերլուծական անդրադարձների մի տպավորիչ գրադարակ: Հաշվի առնելով ակնառու ձեռքբերումները եւ հետագա արդյունավետ աշխատանքի համար բնականոն պայմանների անհրաժեշտությունը, Լինսի հիմնադրամը հոյակապ նվեր էր մատուցել. ՌԱՀՀԿ-ն ստացավ նիստերի դահլիճով ժամանակակից նոր շենք, որտեղ սկսեցին կանոնավորապես անցկացվել թեմատիկ սեմինարներ ու կլոր սեղանի շուրջ բազմաբնույթ քննարկումներ՝ համապատասխան ոլորտների մասնագետների, քաղաքագետների ու քաղաքական գործիչների, միջազգային կառույցների եւ ՀՀ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հետագայում նիստերի դահլիճը լայնորեն օգտագործվում էր նաեւ որպես հարթակ հանրային բանախոսությունների, երիտասարդ քաղաքագետների դասընթացների եւ այլ միջոցառումների համար:

Նույն տարում սկսել էր թարմացվել Կենտրոնի աշխատակազմը. գիտական մասի տնօրեն էր նշանակվել տնտեսագիտության դոկտոր Թաթուլ Մանասերյանը եւ, միաժամանակ, աշխատանքի էր լծվել երիտասարդ փորձագետների մի նոր համաստեղություն՝ Հովսեփ Խուրշուդյանը, Ստյոպա Սաֆարյանը, Արծվի Բախչինյանը, Վահագն Ազգյանը, Մարատ Ատովմյանը: Զգալապես աշխուժացել էր նաեւ հանրային կապերի ծառայությունը՝ ի դեմս Աշոտ Աղաբաբյանի, Լիլիթ Սարուխանյանի եւ Ծովինար Պետրոսյանի: Նոր եռանդուն աշխատակիցներով համալրվել էր վարչատնտեսական հատվածը:

Արդյունքում ՌԱՀՀԿ-ի 2002թ. տարեգիրքը, որը Կենտրոնի փորձագետների ու նրա հետ համագործակցաբար աշխատող մասնագետների ջանադրության խոսուն առհավատչյան էր, նվիրված էր մինչեւ 2020 թվականը երկրի զարգացման եւ անվտանգության ռազմավարության մշակմանը, նրա անցած ճանապարհի վերաիմաստավորմանն ու ապագայի առաջընթացն ապահովող ուղիների որոնմանը: Այդ հրատարակչությունն առաջինն էր, որը համապարփակ ուսումնասիրության նյութ էր դարձնում հետխորհրդային ողջ շրջանի պետական եւ հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ ներկայացնելով Հայաստանի գիտական-փորձագիտական բնագավառի ձեռքբերումներն ու զարգացման միտումները:



Միջազգային խորհրդաժողովների շարքը 2003-ին շարունակվում էր, եւ Կենտրոնը ՆԱՏՕ-ի հետ համատեղ անցկացրեց ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների

իրավունքների պաշտպանության թեման արծարծող սեմինար-քննարկում, որին մասնակցում էին երկրում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների՝ եզդիների, քրդերի, ռուսների, ասորիների, հույների եւ մյուս համայնքների ներկայացուցիչները, խնդրին տիրապետող պետական պաշտոնյաներ, դիվանագետներ, Եվրոպայի խորհրդի ու ԵԱՀԿ-ի մասնագետներ, ինչպես նաեւ «Եվրասիա» հիմնադրամի գործընկերներ Վրաստանից եւ Ադրբեջանից:



2004 թվականին ՌԱՀՀԿ-ը հանդիսավորապես նշեց հիմնադրման առաջին տասնամյակը, որի կապակցությամբ թողարկեց հոբելյանական ստվար մի ժողովածու: Անցած տասնամյակում արդեն կյանքի էր կոչվել փաստական հարուստ նյութի վրա խարսխված շուրջ 100 գիրք՝ գլխավորապես վերլուծական անդրադարձներ, մենագրություններ եւ հատուկ հրատարակություններ: Այդ շրջանում աշխատանքի են ընդունվում նոր երիտասարդ աշխատողներ՝ սոցիոլոգ Սյուզանա Քարսեղյանը, համակարգչային ցանցի կառավարիչ Իրինա Սիմոնյանը, գրադարանավարուհի Արաքս Խալաթյանը, վարչական տնօրենի օգնական Գեւորգ Սահակյանը եւ այլք: Նույն տարում Կենտրոնում ստեղծվում



է Հանրային կարծիքի ուսումնասիրման ազգային ծառայություն, որը գործում է մինչեւ 2007 թվականը ներառյալ: Այդ ընթացքում ինչպես հանրապետության բնակչության շրջանում, այնպես էլ փորձագիտական մակարդակով անցկացվում են ամենաարդիական խնդիրների վերաբերյալ մի քանի տասնյակի հասնող սոցիոլոգիական հարցումներ, որոնց արդյունքները պարբերաբար վերլուծվում ու ամփոփվում էին սեմինարներում եւ հրապարակվում էլեկտրոնային մամուլում:

2005-ին Կենտրոնի խնամարկությունը կտրուկ նվազում է, եւ անձնակազմը ստիպված է լինում աշխատել ֆինանսական սղության բարդ պայմաններում: Մի շարք ծրագրեր փակվում են: Սակայն անձնակազմի՝ իր մասնագիտական կոչմանն առավել նվիրված հիմնական կորիզը մնում եւ շարունակում է աշխատել: Այդ շրջանում հետազոտությունների ղեկավար է նշանակվում Կենտրոնի երիտասարդ ու եռանդուն փորձագետներից մեկը՝ Ստյոպա Սաֆարյանը: Դրությունը հետզհետե շտկվում է, եւ 2007-ին ՌԱՀՀԿ-ը հրապարակում է տարեվերջյան հիմնարար աշխատությունը՝ եռալեզու գիրքը, որը Հայաստանի այսօրվա ու վաղվա հիմնախնդիրների վերաբերյալ Կենտրոնի եւ նրա հետ համագործակցող փորձագիտական խմբի ստեղծագործական պրպտումների արգասիքն էր: Դա անհատական եւ թիմային ակտիվ գործակցության մի հանգրվան էր, որը թույլ էր տալիս արծարծել նոր հետաքրքիր թեմաներ, ընդլայնել հետազոտությունների աշխարհագրությունը եւ ուրույն մոտեցումներ ցուցաբերել տեսական ու գործնական քննարկումների եւ կիրառական ուսումնասիրությունների նկատմամբ:

Հաստատության կյանքում 2006-2007 թվականներն արդյունավորվեցին հատկապես միջազգային հեղինակություն վայելող «Համաշխարհային հարցերի Չիկագոյի խորհուրդ» եւ «Համաշխարհային հասարակական կարծիք» կազմակերպությունների հետ ՌԱՀՀԿ-ի Հանրային կարծիքի ուսումնասիրման ազգային ծառայության սերտ համագործակցությամբ: Համամոլորակային այդ կազմակերպությունների կողմից աշխարհի 18 երկրներում անցկացված հարցախույզներում, որոնց օժանդակում էին տեղերում գործող մեկական սոցիոլոգիական կառույց՝ բնականաբար ամենից ազդեցիկները, Հայաստանը ներկայացնում էր Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը: Ուսումնասիրությունները նվիրված էին մասնավորապես համաշխարհային տաքացման, շրջակա միջավայրի պահպանման, աշխարհում ԱՄՆ-ի դերակատարության եւ մի շարք այլ գլոբալ խնդիրների բացահայտմանը:

2008-ին ՌԱՀՀԿ-ն անդրադարձել է Հայաստանի եւ հարավկովկասյան տարածաշրջանի հանգուցային խնդիրների ու մարտահրավերների վերհանմանը՝ սեմինարների, կլոր սեղանի շուրջ հանրային քննարկումների, շաբաթական հրատապ դիտարկումների, վերլուծությունների եւ մենագրությունների տեսքով: Քննարկման նյութ են դառնում ոչ միայն ներքաղաքական եւ ներհասարակական օրախնդիր թեմաները, այլեւ աշխարհաքաղաքական մարտահրավերներն ու Հայաստանի անվտանգության հարցերը:

2009թ. փետրվարին ՌԱՀՀԿ տնօրեն նշանակվեց հայտնի վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսյանը՝ զինանոցում ունենալով երկրի համար կարեւորագույն հինգ հիմնական ոլորտներ ներառող հետազոտությունների ու վերլուծությունների իրականացման ծրագրեր: Դրանք էին՝ հասարակությանը հուզող հարցեր, տնտեսություն, միջազգային եւ տարածաշրջանային մարտահրավերներ, ազգային անվտանգությանն առնչվող օրակարգ, զարգացման համաշխարհային ու տարածաշրջանային միտումներ: Խնդիր էր դրված նաեւ պահպանել ու արդիականացնել Կենտրոնի՝ որպես առաջատար Think tank հաստատության, եզակի դիրքը եւ մտավոր ազնվության, արհեստավարժ անաչառության սկզբունքների վրա խարսխված ստեղծագործ, նորարար քննախուզությանը ներազդողի դերը՝ զուգահեռաբար բարձրացնելով բանավեճերի մակարդակն ու մշակույթը եւ ընդարձակելով Հայաստանում քաղաքական դատողությունների տեսածիրը:

Տարին հարուստ էր ոչ միայն սեմինարներով, ասուլիսներով, առանց հղումների հատուկ զեկուցումներով եւ մեկնաբանություններով, այլեւ չորս հիմնարար մենագրություններով ու ծրագրային հոդվածներով: Մասնավորապես՝ Րաֆֆի Հովհաննիսյանը հանդես եկավ «Բաց նամակ հայ ազգին» վերտառությամբ հրապարակախոսական ուղերձով եւ հայ-թուրքական հարաբերություններին նվիրված ուղենշային հոդվածաշարով, որը տպագրեցին նաեւ արտասահմանյան մի շարք հեղինակավոր պարբերականներ:

Հաջորդ տարվա՝ 2010-ի սկիզբը նշանավորվեց «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. նոր գաղափարների ուժը» եռալեզու տարեգրքի լույսընծայմամբ, որի մեջ համակողմանիորեն արծարծված են երկրի առաջընթացի արագացման ուղիները, ներքաղաքային ու ներազգային հրամայականները, սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրները, արտաքին քաղաքականության գերակայությունները, ապագայի ուղենիշները եւ հրատապ այլ թեմաներ: Այդ տարվա ամենաառանցքային նյութը Արցախն էր, որի խնդրի վերաբերյալ լրատվամիջոցներին, այդ թվում՝ ադրբեջանական, պարզաբանումներ ու մեկնաբանություններ էին տալիս Մանվել Սարգսյանը, Ռիչարդ Կիրակոսյանը եւ Կարապետ Կալենյանը: Արցախյան թեմատիկայի պսակը դարձավ Մանվել Սարգսյանի հեղինակած «Լեռնային Դարաբաղ. պատերազմ եւ քաղաքականություն (1990-93թթ.)» ռուսերեն աշխատությունը, որը ԼՂՀ-ում եւ ՀՀ-ում պետականության կայացման փուլերի անաչառ վերլուծության լուրջ փորձ է: 90-ականների սկզբին պետականակերտման ոլորտի խեղաթյուրումները, ինչպես նաեւ բանակ-քաղաքացիական իշխանություններ եւ տնտեսություն-քաղաքականություն սերտաճման գործընթացներն են լուսաբանված ՌԱՀՀԿ-ի արտահաստիքային հեղինակների ուժերով պատրաստված՝ «Սահմանադրական պետության կառուցման հիմնախնդիրը Հայաստանում» գրքում:



Տարվա տպագրական արտադրանքի բեղուն «հունձքը» պայմանավորեցին Րաֆֆի Հովհաննիսյանի «Հայաստանի դիրքորոշումը. Արդարություն՝ տանը, արդարություն՝ աշխարհում» եւ «Ամեն ինչին իր ժամանակը. Թուրքիան, Իսրայելը եւ ճշմարտության պահը» հոդվածները: Վերջինիս անգլերեն տարբերակը տպագրվել է նաեւ ԱՄՆ-ի, Իսրայելի, Թուրքիայի եւ Եվրոպայի բավական ազդեցիկ լրատվամիջոցներում: Իսկ տարեվերջին իր առաջին շրջանավարտումը տվեց ՌԱՀՀԿ-ին առընթեր Երիտասարդ փորձագետի նորաբաց դպրոցը: Համապատասխան նմուշի վկայականներ ստացավ անվճար հիմունքներով եռամսյա դասընթացներ անցած 25 երիտասարդ:

2011թ. ապրիլին Կենտրոնի հետազոտական աշխատանքների համակարգման պատասխանատվությունը



ստանձնեց ճանաչված քաղաքագետ Մանվել Սարգսյանը: ՌԱՀՀԿ-ում արդեն աշխատանքի մի քանի տարվա փորձ ունեցող աշխատողների եւ նորեկների ուժերով վերաձեւավորվեց փորձագետների ու օգնականների նոր թիմ, որի կազմում էին Սարո Սարոյանը, Էդգար Վարդանյանը, Արմինե Ղազարյանը, Աշխեն Մուշեղյանը, Լիլիթ Սարուխանյանը, Ռուզան Պլուզյանը եւ հետագայում նրանց միացած Գրիգոր Բոյախչյանցը: Պարբերաբար անցկացվող քննարկումներին մասնակցում էին ոչ միայն փորձագետ-վերլուծաբաններ, հանրային գործիչներ ու լրագրողներ, այլեւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներ: 2011 թվականի գործունեությունն ամփոփվեց «Հարավային Կովկասը 2008 թվականից հետո» վերտառությամբ նոր եռալեզու տարեգրքով, որում վերհանված է նախորդ երեք տարիներին մեր երկրում, հարավկովկասյան տարածաշրջանում եւ աշխարհում տեղ գտած կարեւորագույն զարգացումների ու հեռանկարների համայնապատկերը: Դեկտեմբերին հերթական շրջանավարտումը տվեց Երիտասարդական դպրոցը, որտեղ ընդգրկված էին ոչ միայն սկսնակ փորձագետներ, այլեւ քաղաքագիտությամբ եւ հասարակական գիտություններով հետաքրքրված երիտասարդներ:



2012-ն արդյունավետ էր հատկապես լրատվամիջոցներում ՌԱՀՀԿ փորձագետների ակտիվ մասնակցությամբ հրավիրվող քննարկումների, մեկնաբանությունների եւ բանավեճերի տեսանկյունից: Մարտի 23-ին Երիտասարդ քաղաքագետների դպրոցում վերսկսվեցին պարապմունքները. ուսումնական ծրագիրը ներառում էր 13 սեմինար՝ դարձյալ շաբաթը մեկ

պարբերականությամբ: Ուսուցման երրորդ տարվա նյութը «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման եւ սահմանադրական պետության ձեւավորման հիմնախնդիրները. նոր մարտահրավերներ» թեման էր: Մայիսից սկսյալ Կենտրոնը ձեռնարկեց թեմատիկ վերլուծականների շարք՝ «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» եռամսյա պարբերականի տեսքով թողարկելով չորս համար: Նոր հրատարակության նպատակը տարածաշրջանային եւ համաշխարհային զարգացումների լույսի ներքո Հայաստանի անհետաձգելի խնդիրների լուսաբանումն էր, ինչպես նաեւ մարտահրավերների ու հեռանկարների մատնանշումը: Տարին առատ էր պաշտոնական հանդիպումներով եւ հյուրընկալություններով: ՌԱՀՀԿ-ում Րաֆֆի Հովհաննիսյանն ընդունել է Հայաստանում հավատարմագրված մի շարք երկրների դեսպանների, ինչպես նաեւ Գերմանիայի եւ Ուրուգվայի ԱԳ նախարարներին, հանդիպումներ է ունեցել ֆրանսիացի, անգլիացի ամերիկացի ուսանողների ու թուրք լրագրողների հետ:



Հաջորդ երկու տարիներին Կենտրոնը մեծ ուշադրություն էր դարձնում զանգվածային տեղեկատվության միջոցներով իրականացվող աշխատանքներին: 2013-ին ՌԱՀՀԿ փորձագետները վեց տասնյակից ավելի հարցազրույցներ ու մեկնաբանություններ են տվել հայաստանյան եւ արտասահմանյան թերթերին, հեռուստաալիքներին, վերլուծական կայքերին ու լրատվական գործակալություններին: Բացի դրանից, նույն տարում անց են կացվել շուրջ մեկ տասնյակ սեմինարներ եւ կլոր սեղանի շուրջ քննարկումներ, իսկ տարին ամփոփվել է փորձագիտական խմբի ուժերով հրատարակված «Հայաստան-2013. հաղթահարելով դժվարությունները» աշխատությամբ: Նրանում իրենց հակիրճ արտացոլումն են գտել 2013 թվականի հասարակական-քաղաքական կյանքի առանցքային իրադարձությունները:

Հիմնադրման 20-րդ տարին՝ 2014 թվականն առանձնանում է բազմահազարանոց լսարաններ ունեցող լրատվամիջոցների հետ Կենտրոնի փորձագետների ակտիվ գործակցությամբ: Այդ տարվա տեղեկատվական «հունձքը» կազմում է 75-ից ավելի հարցազրույցներ եւ գրեթե նույնքան մեկնաբանություններ միջազգային ու ներպետական, քաղաքական-հասարակական խնդիրների վերաբերյալ: Իսկ սեպտեմբերի 3-ին Ռազմավարականը ԼՂՀ-ում գործող հասարակական կազմակերպություններից մեկի՝ Արցախի արտաքին քաղաքականության ու անվտանգության հանրային խորհրդի հետ համատեղ Շուշիում անցկացրեց ընդլայնված քննարկում, որը նվիրված էր «ԼՂՀ հիմնախնդիրը միջազգային հարաբերությունների սաստկացման պայմաններում» թեմային: Խորհրդաժողովին մասնակցում էին քաղաքագետ-վերլուծաբաններ, արցախյան խնդրին փորձագիտական մակարդակով տիրապետող անձինք Երեւանից ու Արցախից, ՀԼՄ-ների ներկայացուցիչներ: 2014-ի ավանդական տարեվերջյան ժողովածուն հոբելյանական էր եւ կրում էր «Հայաստան-2014. ստեղծագործական ուղու 20 տարիներ» վերտառությունը:



Հետագա չորսուկես տարիները կարելի է բնորոշել իբրեւ ժամանակին համահունչ նոր մոտեցումների եւ տեղեկատվական նոր աշխատաեղանակների ներդրման ակտիվ ձեւերի փնտրտուքների ժամանակաշրջան: Այդ փուլում կենտրոնի գլխավոր հրատարակությունը «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» եռամսյա հանդեսն էր, որը պարբերաբար ներկայացնում էր ժամանակի ամենակարեւոր թեմաներով վերլուծական նյութեր, հետազոտություններ, ժամանակագրական եւ քննական տարաբնույթ դիտարկումներ: Ջետեղվում էին գլխավորապես Հայաստանի ու Մեծ մերձավոր արեւելքի տարածագոտու քաղաքական, սոցիալ-տնտեսական հրատապ հիմնախնդիրներին առնչվող ուշագրավ ուսումնասիրություններ, օրախնդիր անդրադարձներ եւ այլն:

2017թ. սեպտեմբերի 26-ից ՌԱՀՀԿ-ն անցնում է տեղեկատվության, վերլուծական հետազոտությունների տարածման նոր, ավելի արդիական, արագ ու արդյունավետ միջոցի՝ էլեկտրոնային տարբերակի ներդրման: Նախորդին փոխարինելու էր եկել շաբաթական թարմացումներով «ՌԱՀՀԿ. Հայացք Երեւանից» էլեկտրոնային շաբաթաթերթը: Ամենակազմը շարունակում է արդեն ձեռք բերված բազմամյա փորձի լույսով հավատարիմ մնալ մամուլի ամենակարեւոր երկու սկզբունքների՝ հեղինակային խոսքի լիակատար ազատության եւ անաչառության ապահովմանը:



Չուգահեռաբար՝ գործածության մեջ են դրվում այնպիսի հնարքներ, ինչպիսիք են թեմատիկ, ժանրային ու ոճական բազմազանությունը, նյութի կառուցիկությունը եւ մատուցման դյուրացումը: Անցումը աշխատանքի նոր, առաջնակարգ ձեւերի՝ հնարավորություն է տալիս արագ ու հասանելի դարձնել տպագիր արտադրանքի շրջանառությունը՝ ներառելով կարծիքների լայն տարրապատկեր եւ անհամեմատ ավելի մեծ լսարան: Շուրջ երկու տարվա փորձը վկայում է, որ էլեկտրոնային տարբերակն ի զորու է ապահովել մեր հետազոտական գործունեության պատշաճ շարժընթացը, ռիթմը եւ վերլուծությունների թեմատիկ խճանկարը:

Մի խոսքով՝ նոր «Հայացքը» ապարեզ է իջել ոչ միայն նոր ծրագրահենքով, գաղափարներով ու տեխնիկական նորովի լուծումներով, այլեւ ներհայաստանյան վայրիվերումները, փոփոխվող աշխարհի դեմքն ու գույները հնարավորինս արագ եւ անսխալ տարբերակելու, իմաստավորելու եւ հանրությանը ներկայացնելու գործում իր դերակատարության խորն ըմբռնումով: ՌԱՀՀԿ-ի «Հայացք Երեւանից» կայքէջի թարմաշունչ, լուսառատ եւ կառուցողական ընթացքին նոր երանգ են հաղորդում ռադիոթողարկումները, որոնք շաբաթական պարբերականությամբ սփռում են երկրում տեղի ունեցած կարեւորագույն իրադարձություններն ու դրանց անաչառ մեկնաբանությունները:

Ամփոփում

ՌԱՀՀԿ-ն իր կենսագրության 26-րդ տարին թեւակոխում է նվաճած դիրքերը նորովի ամրացնելու վճռականությամբ: Եվ այսօր Կենտրոնի հիմնադիր նախագահ Րաֆֆի Կ. Հովհաննիսյանի գլխավորած անձնակազմի յուրաքանչյուր անդամ՝ հետազոտությունների ղեկավար, քաղաքագետ Մանվել Սարգսյանը, վարչական տնօրեն, վերլուծաբան Կարապետ Կալենցյանը, խմբագիր, հրապարակախոս Գեւորգ Լալայանը, թարգմանիչ Մարինա Մուրադյանը, հանրային կապերի մասնագետ Լիլիթ Սարուխանյանն ու համակարգչային ցանցի կառավարիչ Աշոտ Թուրաջյանը եւ մյուսները իրենց ուրույն տեղն ունեն ընդհանուր հաջողությունների մեջ: Անշուշտ, ձեռքբերումների կշիռն ու փայլը զգալիորեն պակաս կլինեին, եթե ստեղծագործական խմբի հետ ներդաշն չաշխատեր օժանդակ-տեխնիկական հատվածը՝ ի դեմս Մամիկոն Սարգսյանի, Անժելա Դանիելյանի, Համլետ Բաղալյանի, Արաքս Խալաթյանի, Ջուլիետա Սարգսյանի եւ Ռաֆիկ Քարամյանի:

Փորձագիտական-վերլուծական գործունեության համակարգման եւ արդյունավետ կազմակերպման առումով զգալի ավանդ են ներդրել տարբեր ժամանակներ ղեկավարած Տիգրան Հայրապետյանը, Արշավիր Գաբուճյանը, Հրաչ Հակոբյանը, Թաթուլ Մանասերյանը, Ստյոպա Սաֆարյանը, Ռիչարդ Կիրակոսյանը եւ Մանվել Սարգսյանը:

Կենտրոնի գաղափարական քուրայում թրծված եւ փորձի մեծ դպրոց անցած մի շարք մասնագետներ հետագայում ձեռնարկեցին վերլուծական-քաղաքագիտական իրենց հաստատությունները եւ այժմ շարունակում են ձեռք բերածն արդյունավետ կերպով ներդնել կիրառության մեջ՝ զարգացնելով ու բազմապատկելով ավանդույթները: Նախկին աշխատակիցների շարքում կան ճանաչված քաղաքական գործիչներ, գիտնականներ, Ազգային ժողովի պատգամավորներ, լրագրողներ: Ռազմավարականն իրավամբ հպարտանում է իր նախկին եւ ներկա աշխատողների հաջողություններով:

Երկուսուկես տասնամյակի ընթացքում ՌԱՀՀԿ-ն պատրաստել է հարյուրավոր հրատարակություններ ու զեկույցներ, հատուկ թողարկումներ, պարբերաբար անց է կացրել սեմինարներ, խորհրդաժողովներ, ինչպեսեւ կլոր սեղանի շուրջ տարաբնույթ քննարկումներ ու սոցիոլոգիական հարցումներ՝ նպատակ ունենալով բարձրացնել հանրային իրազեկությունը եւ խորացնել քաղաքացիական ներգրավվածությունը մի շարք հրատապ ոլորտներում: Հայթուրքական հարաբերությունների վերհանում, մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման միջավայրի ձեւավորում, ազգային տնտեսության մարտահրավերների դիմագրավում, անվտանգություն, արցախյան հիմնախնդրի համակողմանի արծարծում, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ներկայացում, Հարավային Կովկասում Հայաստանի տեղի ու դերի ճշտորոշում. ահա ՌԱՀՀԿ-ի թեմատիկ անդրադարձների ոչ ամբողջական ցանկը:

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի ղեկավարությունը, ողջ կազմը, անձամբ Րաֆֆի Հովհաննիսյանը երախտապարտ են բոլոր ժամանակների աշխատակիցներին, ովքեր անձնվիրաբար ծառայել են Կենտրոնին եւ հավատարիմ մնացել մասնագիտական իրենց կոչմանը: Մարդիկ, ում ջանադիր ու ստեղծարար գործունեության շնորհիվ ՌԱՀՀԿ-ն արդեն քառորդ դար հայաստանյան քաղաքագիտական հարթակում պատվով է կրում առաջատարի իր չխամրող համբավը:



Նրանց, ովքեր ցանկանում են նյութապես աջակցել ՌԱՀՀԿ-ին Հայաստանի Հանրապետությունում, հայտնում ենք, որ մեր բանկային հաշվի համարն է՝

Ամերիաբանկ

h/h 1570010151040100 դրամ

h/h 1570010151040146 եվրո

h/h 1570010151040101 դոլար

Quarter Century Creative Path

The Armenian Center for National and International Studies Turns 25



The Armenian Center for National and International Studies (ACNIS), better known to the public as the "Raffi's Center," is 25 years old. In October 1994, it was founded by RA First Minister of Foreign Affairs Raffi K. Hovannisian, receiving the support of a wide range of adherents from Armenia and the Diaspora.

This was the first independent think tank in Armenia of its kind, paving the way for other similar institutions year after year, becoming a unique smithy of political scientists, experts and analysts of new thinking and quality. ACNIS was able to quickly occupy its political niche in the post-Soviet space, acting as a force shaping a geopolitical creative consciousness and contributing to a comprehensive understanding of world events and the international situation.

Over the past two and a half decades, the Center has expanded its scope of activity, including regional security and cooperation, prospects for applied research on domestic and foreign policy and an open dialogue with the public. In this regard, the Center's publishing materials, case studies on key issues, monographs, as well as scientific and practical forums and public discussions were of key importance. Since its inception, ACNIS, in addition to individual expert articles, monographs and special compilations, has been issuing its own quarterly newsletter, "A View from Yerevan," on the pages of which the problems and challenges of both Armenia, Artsakh and the Diaspora, as well as events in the region and international life, are impartially covered.

The following years, the life of the Center was marked by socially relevant sociological research and conferences on public, local and international issues. It is noteworthy that with the support of the Lins Foundation, the OSCE, the Central Bank of Armenia, the "Tigran Mets" Publishing House and KPMG Armenia, a two-day international conference "Prospects for Regional and Interregional Cooperation and Conflict Resolution" was held on September 27-28, in the year 2000, with the participation of ambassadors and embassy staff, senior officials of international organizations, prominent government and military figures, expert analysts from around the world.

In less than a year, ACNIS organized the next major event - an international conference arranged with the support of the German Embassy in Armenia, devoted to the theme "The role of the police in a democratic system" aimed at answering the key question of how successful Armenia had been in the first decade of its sovereignty to implement the principles of the rule of law and guarantees of public safety in public life, and what were the ways of struggle to overcome obstacles to enhancing the role of the police and democratization of Armenia.

A unique place among international conferences is occupied by a discussion seminar held in 2003 in the framework of cooperation with NATO and the protection of the rights of minorities living in Armenia: Yezidis, Kurds, Russians, Assyrians, Greeks and other communities. In the same period the National Center for Public Opinion Research was established inside ACNIS which operated until 2007 inclusive. Several dozens of opinion polls were conducted on the most relevant agendas both among the population of the republic and at the expert level, the results of which were regularly analyzed and summarized at seminars and publications in the electronic press.

All these discussions, seminars, debates, publications, scientific articles, monographs, books, analytical essays, of course, could not and did not go unnoticed. In the life of the Center, 2006-2007 was marked by close cooperation between the National Center for the Study of Public Opinion, ACNIS, and the world-famous Chicago Board of International Affairs and World Public Opinion. Armenia was represented by the Armenian Center for Strategic and National Studies in surveys conducted by these popular organizations in 18 countries around the world in collaboration with one of the most influential local sociological structures in the respective country. The studies were designed to clarify a number of issues regarding global warming, environmental protection, the role of the United States in the world, and other issues of concern to humanity.

Two years ago, in September 2017, ACNIS switched to a more modern, fast and efficient way of disseminating information and analytical products - to electronic format. To replace the previous format came the electronic publication "ACNIS: ReView from Yerevan" with weekly updates. In the light of many years of experience, employees continue to adhere to two of the most important principles of the press - complete freedom of speech and impartiality. The transition to new, advanced forms allows faster and more affordable distribution of printed materials, including a wider range of opinions and a much larger audience. Two years of experience show that the electronic version is able to provide the proper flow, rhythm, thematic mosaic of weekly analysis and commentary on our research activities.

The Strategic Center is rightly proud of the successes of its former and current employees. The entire staff of the Center, personally Raffi Hovannisian, is grateful to all the employees who devoted themselves to the Center and remained faithful to their professional vocation.



VISIT OUR WEBSITE

www.acnis.am

- Editorial
- Analysis
- Free Platform
- Weekly Update
- Book Review
- Խմբագրական
- Վերլուծական
- Ազատ ամբիոն
- Շաբաթվա անցուդարձ
- Գրքի մեկնություն

Четвертьвековой неуклонный путь



Армянскому центру стратегических и национальных исследований 25 лет

Армянскому центру стратегических и национальных исследований (АЦСНИ), более известному публике как «Центр Раффи», исполнилось 25 лет. В октябре 1994 года его основал первый министр иностранных дел РА Раффи К. Ованнисян, получив поддержку широкого круга сторонников из Армении и диаспоры.

Это был первый независимый мозговой центр Армении в своем роде, год от года прокладывающий путь для других подобных учреждений, становясь уникальной кузницей политологов, экспертов и аналитиков нового мышления и качества. АЦСНИ смог быстро занять свою политическую нишу на постсоветском пространстве, выступая в качестве силы, формирующей геополитическое творческое сознание и способствующей всестороннему пониманию мировых событий и международной обстановки.

За последние два с половиной десятилетия Центр расширил сферу своей деятельности, включив вопросы региональной безопасности и сотрудничества, перспективы прикладных исследований внутренней и внешней политики и открытый диалог с общественностью. В этой связи ключевое значение имели издательские пособия Центра, тематические исследования по ключевым вопросам, монографии, а также научно-практические форумы и общественные дискуссии. С момента своего создания АЦСНИ, в дополнение к отдельным экспертным статьям, монографиям и специальным сборникам, выпускает свой собственный ежеквартальный информационный бюллетень «Взгляд из Еревана», на страницах которой беспристрастно освещеются проблемы и вызовы как Армении, Арцаха и диаспоры, так и события в регионе и международной жизни.

